

Գրանցված է ԼՂՀ արդարադատության
նախարարությունում «1» դեկտեմբերի 2014թ.
Պետական գրանցման համար 2051495
ԼՂՀ արդարադատության նախարար

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» նոյեմբերի 2014թ.

N 16-Ն

ք. Ստեփանակերտ

**ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՅՏԻ, ՆԱԽԿԻՆՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ
ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 9-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 9.3-րդ հոդվածի 7-րդ մասը և «Իրավական ակտերի
մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում արտադրվող
պարտադիր դրոշմավորման ենթակա որոշ ապրանքների համար
դրոշմապիտակների ձեռքբերման հայտի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված պարտադիր դրոշմավորման ենթակա որոշ ապրանքների համար նախկինում ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման մասին հաշվետվության ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված պարտադիր դրոշմավորման ենթակա որոշ ապրանքների համար դրոշմապիտակների ձեռքբերման հայտի, նախկինում ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման մասին հաշվետվության ձևերը սահմանելու մասին» N 9-Ն հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից, իսկ դրույթները կիրառվում են 2014 թվականի նոյեմբերի 15-ից:

Հ/Ծ 1-ԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ա. ԲԱԼԱՅԱՆ

Հավելված N 1
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 կառավարությանն առընթեր հարկային
 պետական ծառայության պետի
 «19» նոյեմբերի 2014թ.
 N 16-Ն հրամանի
Ձև

ՀԱՅՏ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ	Փաստաթղթի հերթական համարը <hr style="width: 80%; margin: 5px auto;"/> <small>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</small>								
1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	<table border="1" style="width: 100%; height: 20px; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> </tr> </table>								
2. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը									
3. Գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը)									
4. Հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը									

5. Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ	6. Ապրանքախմբի համառոտ անվանումը	7. Ապրանքատեսակի անվանումը	8. Տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավոր)	9. Արտադրվող ապրանքների դրոշմավորման համար անհրաժեշտ դրոշմապիտակների քանակ
Ընդամենը				

Հարկ վճարողի/ղեկավարի _____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

«___» _____ 20 թ

Կ.Տ.

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
 ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Մ. ՀԱՅՐԱՊԵՏԱՆ

Հարկ վճարողի/ղեկավարի _____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

«___» _____ 20 թ

Կ.Տ.

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Մ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ